

ղեցիք ընդ հովանեալ թեւոց քոց հաստատուն մնան, եւ իբրեւ զարեգակն փայլեն, եւ մանկունք եկեղեցւոյ ի վայրի դալարեով արածին, եւ ի ջուրս հանդրատեան սնանին: Արդ՝ անկեալ զոլով ի մէջ աշակիսի տառապանաց, եւ ոչ զբտանելով այլուստ մխիթարութիւն վըտաց մերոց, Ձեր Արքութեանդ յայտնեմք գնեղութիւնս մեր, թերեւս այսու լիցի զիրութիւն սրտից մերոց, եւ Դուք ցաւակից լինիք աղետիցս մերոց, եւ վըտակցարար շարժիք առ Ազգս մեր, որպէս առ ոսկերս ոսկերացդ, եւ անդամս անդամոցդ. եւ մի հեռացուցանիցէք հայրական գութ ի մէջնջ, զի ոչ եմք օտարք, այլ եմք զինք արեան Քրիստոսի եւ ոչխարք բանաւոր Հօտին նարին, եւ Ձեօք պարծենամք հանապաղ ի մէջ այլազեանցն: Իսկ զորքանութիւն տառապանացս մերոց ընդ զբով արկանել աւելորդ վարկանիմ, քանդի լիսպէս եւ բովանդակարար կարէ ծանուցանել Արքութեանդ Ձերում մեր սիրելի եւ մեծափառ Պօղոս Արքեպիսկոպոս նախնուանու, այլ եւ զսիրոյ մերոյ ճշմարտութիւն եւ բարեմտութիւն, զոր ունիմք առ Ձեր Արքութիւնդ, ինքնին յայտնապէս զիտէ փորձիւ, որ ամօք բազմօք չըջնցաւ ի մէջ Ազգիս մերոյ, եւ ծանեալ մի բառ միտջն զամենայն իբրեւ հաւատապատում քննող, յորմէ լսել կարէ Մեծութիւն Ձեր բաւականապէս, եթէ կամիցի: Բայց զի մի երկարագոյն բանիւք երեւեսցուք, աստանօր աւարտ, արասցուք զայս միայն ինչդրելով ի Արքութենէդ զի ազաշեսցէ զբարեբարն Աստուած, զի զիս անարժանս արժանի արասցէ մարմնաւոր աչօք հայել ի Արքութիւնդ Ձեր շնորհացն Հոգւոյն Արքոյ, որով ողջ մնացես յամենայն ժամ ի Քրիստոս Յիսուս ի Տէրն Մեր, առ ի հաստատութիւն սրբոյ եկեղեցւոյ, եւ ի պարծանս մեր. Ամէն:»

«Գրեցաւ ի դուռն Արքոյ Աթոռոյ Իջման Բանին Աստուծոյ, յամի մարդեղութեան Քրիստոսի ՌՈՂԱ (1661), եւ ըստ տոմարին Հայոց ՌՃՁ (1661), յամսեան Սեպտեմբերի ԻԸ (28):»

Կարմիր մելանով կնիք:

Ստորեւ Լատիներէն եւ Հայերէն:

«Հայր Ստեփան Վարդանովիչ Կնքապահ, անձամբ գրեցի»: (2)

Հոս յարգալից եւ քաղաքավարական նամակէ մը զատ ուրիշ բան տեսնալ, այսինքն՝ դաւանական մերձեցում, ծիծաղելի պիտի ըլլայ: Յակոբ Դ. նախամեծար Հռովմի հանդէպ պարտ ու պատշաճ յարգանք ունի, որ բնական միայն կարելի է սեպել:

Իսկ ի՞նչ բան առիթ տուած էր կաթողիկոսին որ այս նամակը գրէր: Յակոբ Դ. իր նամակին առաջին մասին մէջ իսկ կը յայտնէ «զի լուեալ մեր վան թագաւորաց քրիստոնէից խաղաղութեան եւ ընդ միմիանս հաշտութեան... զի քրիստոսասէր թագաւորքն՝ Չանիւ եւ միջնորդութեամբ Արքութեանդ Ձերոյ (Պատին) ընդ միմիանս հաշտեցան»:

1661-ին մենք Քրիստոնէայ թագաւորներու միջեւ յեւրոպա հաշտութիւն մը կնքուած չենք գտներ: 1660-ին Շուէտի եւ Տանիմարքայի պատերազմէն վերջ Կօպենագի եւ Օլիւաի խաղաղութիւնը կնքուեցաւ: Սակայն ասոր մէջ Պապը գործ մը չունէր, եւ ոչ ալ երկու երկիրներու կնքած հաշտութիւնը միջազգային խոշոր նշանակութիւն մը ունէր, մինչեւ իսկ Յակոբ Դ. Կաթողիկոսին զհունակութիւն պատճառելու չափ: Սակայն կայ 1659-ի Պիրենեան կոչուած հաշտութիւնը որ կնքուեցաւ Ֆրանսայի Լուի 14-ի թագաւորին եւ Սպանիոյ Ֆի-

(2) Նամակը գտած ու հրատարակած է Մեսրոպ Վ. Թերզեան իր Յակոբ Դ. Զուգայեցի մեկագրութեան մէջ ուր կը գրէ այս մասին: «Յակոբ Կաթողիկոսի այս ինքնագիր բուրքը գտանք Հաւատոյ Տարածման Դիւանին մէջ: Գեղեցկօրէն գրուած է Մագաղաթի վրայ. ոսկեգոյն քանափոյ: Զայն կը հրատարակենք նոյնութեամբ:» էջ 119. Շնորհակալ պէտք է ըլլանք այս հրատարակութեան համար, այլապէս մուրիմ մէջ պիտի մնայինք կասկածելով որ Յակոբ Դ. կըրնար լատինամերձօրէն բուրք մը գրած ըլլար: Թերզեան վարդապետի այս հրատարակութիւնը ամէն կասկած կը փարատէ եւ կը փաստէ թէ Կաթողիկոսը որեւէ լատինամերձօրէն ցոյց տուած չէ 1661-ին յիշուած սակայն պարունակութեամբ անձամբ մնացած բուրքին մէջ: